ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2019/21

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ի (այսուհետ՝ նաև ԱՁ) կողմից 13.02.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ն 13.02.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտատարված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիրը կազմված է միայն մեկ ապրանքատեսակի համար, ավելին աշխարհում միայն մեկ նմանատիպ ապրանքն արտագրողի համար:

Տեխնիկական բնութագիրը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների.

Տվյալ ընթացակարգն առաջին անգամ հայտարարվել է 2018թ. դեկտեմբերին, որի ժամանակ ներկայացվել են դիմումներ ՀՀ ֆինանսների նախարարություն և Պատվիրատուին:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված պատասխանում հստակ գրված է որ վերահայտարարվող մրցույթում անհրաժեշտ է վերանայել գնման առարկայի բնութագիրը, այն համապատասխանեցնելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, սակայն գնման ընթացակարգը վերահայտարարվել է 06.02.2019թ. որում տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ նման է նախորդ գնման ընթացակարգում ներառված տեխնիկական բնութագրին:

Տեխնիկական բնութագիրը կազմված է խտրական և յուրաքանչյուր ցուցանիշ ներկայացված է առանց հնարավոր շեղման, կամ թույլատրելի սանդղակի:

Տվյալ տեխնիկական բնութագրով հարցումներ են արվել նմանատիպ մակարդակի կերեր արտադրող 3 խոշոր ֆիրմաների աշխարհում, և ստացվել են պատասխաններ, համաձայն որոնց նմանատիպ ցուցանիշներով կերեր չկան արտադրության մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը խախտվել է նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված լկարգի 22-րդ կետը՝ համաձայն որի գնման առարկաների բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանք պետք է բավարարեն 1-ից ավելի հնարավոր մասնակիցների, մինչդեռ նմանատիպ ցուցանիշներով կերի պահանջն օբյեկտիվորեն հիմնավորված չէ:

Նշված մրցույթի տեխնիկակն բնութագրին համապատասխանում է միայն Royal Canin ապրանքանիշի միայն «Sport» տեսակի կերը:

Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը:»:

Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ԱՁ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 15.02.2019թ. թիվ 6210-19 գրությամբ Բողոքներ քննող անձին հայտնել է հետևյալը.

«ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար հայտարարված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ընտանի կենդանիների կերի տեխնիկական բնութագիրը կազմվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան՝ ամբողջությամբ և հստակ նկարագրում է ապրանքի հատկանիշները, ձեռքբերման և վճարման պայմանները, չի պարունակում պահանջ կամ հղում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, ծագման երկրին, արտադրողին և այլն: Տարիների ընթացքում փրկարարական շներին տրված տարբեր կերերի ուսումնասիրության, ինչպես նաև շների առողջության, դիմացկունության և ինքնազգացողության վրա թողած ազդեցության արդյունքում, մասնագետների կողմից հավանության է արժանացել նշված տեխնիկական պայմաններին և բաղադրությանը համապատասխանող կերը, որի դրական ազդեցությունը կենդանիների վրա էականորեն տարբերվում է այլ կերերից:»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության լիազորված ներկայացուցիչ Միեր Մնացականյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2019/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 15.02.2019թ. թիվ 6210-19 գրությունը, ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ ընտանի կենդանիների կերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- Ընտանի կենդանիների կեր - չոր թռչնամիս, կենդանական ճարպեր, բրինձ, մեկուսացվ ած բուսական սպիտակուցներ, մեկուսացված սպիտակուցներ կենդանական ծագման, ճակնդեղի պղպեղ, բուսական բջջանյութ, ձկան յուղ, հանքային նյութեր, սոյայի յուղ, եզան լեզվի կեղև և սերմեր psyllium (1%), լյուտեին, խմորիչների հիդրոլիզատ, գլյուկոզամին, ոսկրային հիդրոլիզատ: Հավելումներ (1կգ-ի մեջ) Սննդային հավելումներ: Վիտամին A: 22300 ME, Վիտամին D3: 1000 ME, Վիտամին E: 700մգ, E1 (երկաթ): 48 մգ, E2 (Յոդ): 4,8մգ, E4 (Պղ ինձ): 15մգ, E5 (Մանգան): 62մգ, E6 (Երկաթ) 187 մգ, E8 (Սելեն) 0,09մգ: Տեխնոլոգիակա հավելումներ՝ ծծմբական ծագման քլինոպթիլիթ, 10գ. – կոնսերվանտներ – հակաօքսիդանտներ: Սնուցող նյութերի պարունակությունը Սպիտակուցներ 32%, ճարպեր 30%, հանքայիննյութեր 8,1%, սննդային բջջանյութ 2% - B 1 կգ, լյուտեին 15,5 մգ, բետակարոտին 2մգ , երկաթ 20մգ: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահից հաշված առնվազն 10 ամիս:

Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ն Բողոքներ քննող անձին 13.02.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից հայտատարված ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիրը չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների և վերջինիս համապատասխանում է միայն Royal Canin ապրանքանիշի «Sport» տեսակի կերը:

Բողոքներ քննող անձի այն հարցին, արդյո՞ք կարող է ներկայացվել որևէ ապացույց այն մասին, որ բողոքում նշված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը չի պատկանում կոնկրետ միայն «Royal Canin» ապրանքանիշի արտադրանքին, և արդյո՞ք գնման առարկայի բնութագիրը սահմանելիս հաշվի է առնվել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ, Պատվիրատուի ներկայացուցիչը պարտավորվեց, որ կներկայացնի համապատասխան ապացույց այն մասին, որ գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը չի պատկանում կոնկրետ միայն «Royal Canin» ապրանքանիշի արտադրանքին և հավելեց, որ Հրավերի տեխնիկական բնութագրում ներառվել են այնպիսի որակական չափանիշներ, որոնք անհրաժեշտ և համարժեք են Պատվիրատուի կարիքին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

Օրենքի 13-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

• 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար՝ ընտանի կենդանիների կերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ.

- ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ հատկանիշները՝ ընտանի կենդանիների կեր - չոր թռչնամիս, կենդանական ճարպեր, բրինձ, մեկուսացված բուսական սպիտակուցներ, մեկուսացված սպիտակուցներ կենդանական ծագման,

ճակնդեղի պղպեղ, բուսական բջջանյութ, ձկան յուղ, հանքային նյութեր, սոյայի յուղ, եզան լեզվի կեղև և սերմեր psyllium (1%), լյուտեին, խմորիչների հիդրոլիզատ, գլյուկոզամին, ոսկրային հիդրոլիզատ: Հավելումներ (1կգ-ի մեջ) Սննդային հավելումներ: Վիտամին A: 22300 ME, Վիտամին D3: 1000 ME, Վիտամին E: 700մգ, E1 (երկաթ): 48 մգ, E2 (Յոդ): 4,8մգ, E4 (Պղ ինձ): 15մգ, E5 (Մանգան): 62մգ, E6 (Երկաթ) 187 մգ, E8 (Սելեն) 0,09մգ: Տեխնոլոգիակա հավելումներ՝ ծծմբական ծագման քլինոպտիլիթ, 10գ. – կոնսերվանտներ – հակաօքսիդանտներ: Սնուցող նյութերի պարունակությունը Սպիտակուցներ 32%, ճարպեր 30%, հանքայիննյութեր 8,1%, սննդային բջջանյութ 2% - B 1 կգ, լյուտեին 15,5 մգ, բետակարոտին 2մգ , երկաթ 20մգ: Պիտանելիության ժամկետը մատակարարման պահից հաշված առնվազն 10 ամիս:

- Պատվիրատուի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ բողոքում նշված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը չի պատկանում կոնկրետ միայն «Royal Canin» ապրանքանիշի արտադրանքին, ինչպես նաև չիմնավորեց, որ գնման առարկայի բնութագիրը սահմանելիս հաշվի է առնվել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:

Այսպիսով, Բողոքներ քննող անձը գտնում է, որ Աճուրդով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագիրը չի բխում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետով սահմանված պահանջներից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գաբրիել Գաբրիելյան ԱՁ-ի կողմից 13.02.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/18 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը չկայացած հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ